ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2022թ. N 112-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հիմնադրման միջոցով Ջերմուկ համայնքում ստեղծել «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Սահմանել, որ կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա/ Ջերմուկ համայնքում բազմաբնակարան շենքերի պահպանումը, սպասարկումը, բնակելի ֆոնդի կառավարումը

բ/ փողոցային լուսավորվածության արտաքին ցանցի սպասարկումը և ընթացիկ նորոգումը

գ/ համայնքի կանաչ գոտիների, քաղաքային այգու սպասարկումը և բարեկարգումը

դ/ համայնքի գյուղական բնակավայրերի կոյուղագծերի, ջրագծերի, ոռոգման համակարգի սպասարկումը և ընթացիկ նորոգումը

3. Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել գույք՝ համաձայն հավելվածի:

4. Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջի՝ սույն որոշումը ներկայացնել Ջերմուկ համայնքի ավագանու հաստատմանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հաստատելու մասին Ջերմուկ համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մայիսի 16
Ջերմուկ